Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
սեպտեմբերի 19-ի նիստի N 37
արձանագրային որոշման

Ց Ա Ն Կ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Կատարողը	Ժամկետը
1.	Մաքսային միությանը միացման համար անհրաժեշտ Մաքսային միության շրջանակներում գործող փաստաթղթերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան իրավական դաշտի և Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված միջազգային պայմանագրերի գույքագրում՝ ըստ ոլորտների	ՀՀ վարչապետի 19.09.2013 թ. N 834-Ա որոշմամբ ստեղծված ոլորտային աշխատանքային խմբեր	2013 թ. սեպտեմբերի 23
2.	ԱՀԿ-ի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման հետ կապված՝ Մաքսային միության անդամակցությունից բխող խնդրիների ուսումնասիրություն՝ ըստ ոլորտների	ՀՀ վարչապետի 19.09.2013 թ. N 834-Ա որոշմամբ ստեղծված ոլորտային աշխատանքային խմբեր	2013 թ. սեպտեմբերի 25
3.	Ելնելով 1-ին և 2-րդ կետերում նշված աշխատանքների արդյունքներից՝ համադրել Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության իրավական դաշտերը՝ նկատի ունենալով Մաքսային միության իրավական նորմերի տարանջատում՝ ըստ հետևյալ բաղադրիչների՝ 1) Հայաստանի Հանրապետության համար անմիջապես ընդունելի նորմեր. 2) նորմեր, որոնց ընդունումը կամ մոտարկումը կպահանջի որոշ ժամանակ՝ գնահատելով այդ ժամանակը. 3) Հայաստանի Հանրապետության համար բանակցման ենթակա նորմեր:	ՀՀ վարչապետի 19.09.2013 թ. N 834-Ա որոշմամբ ստեղծված ոլորտային աշխատանքային խմբեր	2013 թ. սեպտեմբերի 30
4.	Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության միանալու հետ կապված ներմուծման մաքսատուրքերի (և համանման ազդեցություն ունեցող այլ տուրքերի, հարկերի և գանձումների) հաշվառման, բաշխման և վճարման՝ Հայաստանի Հանրապետության բանակցային առաջարկությունների նախապատրաստում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2013 թ. սեպտեմբերի 30

5.	Աշխատանքային խմբերի աշխատանքների հիման վրա բանակցային փաթեթի ձևավորում	ՀՀ վարչապետի 19.09.2013 թ. N 834-Ա որոշմամբ ստեղծված՝ Մաքսային միությանը միանալու համար անհրաժեշտ համապատասխան փաստաթղթերի նախագծերը նախապատրաստող աշխատանքային խումբ	2013 թ. հոկտեմբերի 10
6.	Մաքսային միությունում պարտադիր գրանցման ենթակա ապրանքների շարժի կարգավորման ընթացակարգերի ուսումնասիրություն	ՀՀ վարչապետի 19.09.2013 թ. N 834-Ա որոշմամբ ստեղծված՝ ոչ սակագնային կանոնակարգման աշխատանքային խումբ	2013 թ. սեպտեմբերի 25
7.	Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և պրեկուրսորների շրջանառության նկատմամբ հսկողության ընթացակարգերի ուսումնասիրություն	ՀՀ վարչապետի 19.09.2013 թ. N 834-Ա որոշմամբ ստեղծված՝ ոչ սակագնային կանոնակարգման աշխատանքային խումբ	2013 թ. սեպտեմբերի 25
8.	Մաքսային միությանը միանալու համար վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի և իրավական ակտերի թարգմանություն	ՀՀ արդարադատության նախարարության «Թարգմանչական կենտրոն» ՊՈԱԿ	2013 թ. դեկտեմբերի 15
9.	Մաքսային միության իրավական դաշտին համապատասխանեցման նպատակով փոփոխություններ կամ դադարեցում պահանջող՝ Հայաստանի Հանրապետության կողմից կնքված իրավական ակտերի ցանկի որոշում	ՀՀ վարչապետի 19.09.2013 թ. N 834-Ա որոշմամբ ստեղծված ոլորտային աշխատանքային խմբեր	բանակցային պրոցեսն ավարտելուց հետո 15 օր